ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

«03» Դեկտեմբեր 2017թ. N 30-Ն

ՇԵՆՔԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի N 1111-Ն որոշման N 1 հավելվածի 15-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման 18-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ 04 բաժնի 08 խմբի 04 դասի «03. Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» 2017 թվականի ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ 04 բաժնի 08 խմբի 04 դասի «03. Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին 2017 թվականին իրականացվելիք միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:

3) «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝ 04 բաժնի 08 խմբի 04 դասի «03. Շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագրով նախատեսված հատկացումների հաշվին 2017 թվականին իրականացվելիք միջոցառումների ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշները՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ղուլարյանի վրա:

Ն. ՍԱՐԳՍՅԱՆ

«03» Դեկտեմբեր 2017թ.

ք.Երևան

Հավելված N 1
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական
կոմիտեի նախագահի
03 Դեկտեմբեր 2017թ.
N 30-Հ հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 04 ԲԱԺՆԻ 08 ԽՄԲԻ 04 ԴԱՍԻ «03. ՇԵՆՔԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄ» 2017 ԹՎԱԿԱՆԻ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Վերջին տարիներին հանրապետությունում տարբեր նշանակության շենքերի պահպանման, անվտանգ շահագործման և հուսալիության բարձրացման ուղղությամբ համապատասխան միջոցառումներ չեն իրականացվել, որի հետևանքով շենքերի տեխնիկական վիճակը վատթարացել է և դրանց զգալի մասը հայտնվել է անբավարար կամ վթարային վիճակում: Նման շենքերը խոցելի են և չեն կարող ապահովել քաղաքացիների անվտանգությունը: Շենքերի տեխնիկական վիճակի վատթարացմանը նպաստել են նաև հանրապետության տարածքում մեծ տարածում ունեցող սողանքային երևույթները:

2. Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շենքերի տեխնիկական վիճակի վատթարացումը կրում է համընդհանուր բնույթ և քաղաքացիների անվտանգության ապահովումը հանրապետությունում կարևորագույն հիմնախնդիր է, որն ունի ռազմավարական նշանակություն և պահանջում է ՀՀ կառավարության լուրջ միջամտությունը քաղաքացիների անվտանգության և բնականոն գործունեության ապահովման ուղղությամբ:

3. Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների անվտանգության և բնականոն գործունեության ապահովման նպատակով կարևորվում է շենքերի շահագործման հուսալիության և սեյսմակայունության բարձրացումը:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐԸ և ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

4. Ծրագրի նպատակն է՝

1) բնակչության անվտանգ կենսագործունեության պայմաններ ստեղծելու համար ապահովել շենքերի հուսալիությունը և անվտանգ շահագործումը:

2) այդ նպատակի իրականացումը կապահովի ՀՀ համայնքների կայուն զարգացումն ու բնականոն կենսագործունեությունը:

5. Ծրագրի խնդիրն է՝ Հայաստանի Հանրապետությունում շենքերի պահպանման, սեյսմակայունության բարձրացման և հուսալի շահագործման համար համապատասխան հիմնավորված միջոցառումների իրականացման նպատակով դրանց տեխնիկական վիճակի հետազննությունների իրականացում և տեխնիկական անձնագրերի կազմում:

6. Իրականացվելիք միջոցառման նկարագիրը՝

1) Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Հայաստանի Հանրապետությունում հասարակական և բնակելի շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննությունների իրականացում և տեխնիկական անձնագրերի կազմում: Նշված միջոցառումների իրականացումը բխում է ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրերի նախաբանի, «Արտաքին և ներքին անվտանգության ամրապնդում» գերակա ուղղությունից, ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների տեխնիկական վիճակի հետազննություններ ու անձնագրավորում (վկայագրավորում) իրականացնելու և հայաստանի հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 30-ի N 346 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 274-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության, ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 384-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության ծրագրի» և ՀՀ մարզերի զարգացման ռազմավարություններով նախատեսված շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններին և անձնագրավորմանը վերաբերող պահանջներից:

2) Շենքերի պահպանման, սեյսմակայունության բարձրացման և հուսալի շահագործման համար համապատասխան հիմնավորված միջոցառումների իրականացման նպատակով դրանց տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունների և տեխնիկական բնութագրերի անձնագրերի կազմման համար իրականացվում են շենքերի տեխնիկական վիճակի

հետազոտություններ, որոնց ժամանակ հստակեցվում են դրանց վնասվածության առաջացման պատճառները, գնահատվում վնասվածության աստիճանը և սեյսմակայունության մակարդակը:

3) Միջոցառման շահառուներ են հանդիսանում՝ Երևան քաղաքի, ՀՀ Արագածոտնի, ՀՀ Արարատի, ՀՀ Արմավիրի, ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Լոռու, ՀՀ Կոտայքի, ՀՀ Շիրակի, ՀՀ Սյունիքի, ՀՀ Վայոց Ձորի և ՀՀ Տավուշի մարզերի բազմաբնակարան շենքերի բնակիչները, կրթական, մշակութային, առողջապահական, մարզական և այլ նշանակության շենքերի աշակերտները, հիվանդները, մարզիկները, աշխատողները և այցելուները:

4) «03. Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» 2017 թվականի ծրագրի միջոցառումների աշխատանքներն իրականացվելու են համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ներկայացվող հայտերի հիման վրա մրցույթով հաղթող ճանաչված լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

5) Ծրագրի շրջանակներում առաջնահերթ ներառվում են այն շենքերի տեխնիկական վիճակի հետազոտությունների իրականացումը և անձնագրավորումը, որոնք ներառված են լինելու հաջորդ տարիներին ՀՀ բյուջեների հայտերում ներկայացված վերակառուցում, ուժեղացում, վերականգնում կամ հիմնական նորոգում պահանջող շենքերի ցանկում:

6) Երևանի քաղաքապետարանի, ՀՀ պետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված հայտերի հիման վրա ծրագրի շրջանակներում բազմաբնակարան, հասարակական ու այլ նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազոտությունների և տեխնիկական անձնագրավորման իրականացման նպատակով շենքերի առաջնահերթության որոշման համար հիմք են հանդիսանում հետևյալ չափորոշիչները.

ա. շենքի կարևորությունն ըստ նշանակության,

բ. շենքի կառուցման տարեթիվը, հարկայնությունը, կոնստրուկտիվ լուծումները,

գ. շենքում գտնվող մարդկանց (բնակիչ, սան, աշակերտ, ուսանող, մարզիկ, աշխատող, հանդիսատես, այցելու և այլն) հավանական թվաքանակը,

դ. շենքում գտնվելու ժամանակահատվածը,

ե. շենքի տեղաբախշման տարածքի սեյսմիկ վտանգի մեծությունը:

զ. «03. Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» 2017 թվականի ծրագրի միջոցառումների ծախսերի նախահաշիվը ներկայացված է ստորև բերված աղուսյակ 1-ում:

Աղուսյակ 1.

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ
	Հայաստանի Հանրապետությունում շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում, որից՝		**64**		**20.000,00**
1	**Բազմաբնակարան շենքեր**	շենք	24	350.00	**8.400,00**
2	**Հասարակական շենքեր, այդ թվում՝**	շենք	**40**		**11.600,00**
2.1	Կրթական	շենք	25	300,00	7.500,00
2.2	Մշակութային	շենք	4	250,00	1.000,00
2.3	Առողջապահական	շենք	4	350,00	1.400,00
2.4	Մարզական	շենք	3	300,00	900,00
3	Այլ	շենք	4	200,00	800,00

է. տարբեր նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազոտությունների և անձնագրավորման աշխատանքների նախահաշվային արժեքները հաշվարկված են ՀՀ տարբեր մասնագիտական կազմակերպությունների կողմից ներկայումս ձևավորված նվազագույն շուկայական արժեքներին համապատասխան:

III. ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐՍՏՈՒԳԵԼԻ ՉԱՓԱՆԻՇԸ (ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ)

7. Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշ է համարվում աշխատանքների կատարման գնման պայմանագրի տեխնիկական առաջադրանքով սահմանված ժամկետներում, ֆինանսական միջոցների սահմաններում և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան ներկայացվող շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունների և տեխնիկական անձնագրերի առկայությունը:

IV. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՄԲ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ

8. Միջոցառման իրականացման արդյունքում կազմվում են շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություններ և տեխնիկական անձնագրեր, ի հայտ են բերվում շենքերի կառուցվածքային տարրերի վնասվածքների և դեֆորմացիաների առաջացման պատճառները, տրվում է վնասվածության աստիճանը և սեյսմիկ խոցելիության մակարդակը, որոնք հիմք են հանդիսանալու շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացման համար:

9. Միջոցառման իրականացումը նպաստում է տարածքային զարգացման ընդհանուր նպատակների իրագործմանը և համահունչ է ՀՀ մարզերի զարգացման ռազմավարություններին:

VI. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

10. Ծրագրի միջոցառումների իրականացման ֆինանսավորումն նախատեսված է «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածի բյուջետային ծախսերի գործառական դասակարգման 04 բաժնի 08 խմբի 04 դասի «03. Շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և տեխնիկական անձնագրավորում» ծրագրի իրականացման համար 2017 թվականին հատկացված 20,000.0 հազ. դրամ գումարի շրջանակներում:

Հավելված N 2
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական
կոմիտեի նախագահի
03 մարտի 2017թ.
N 30-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 04 ԲԱԺՆԻ 08 ԽՄԲԻ 04 ԴԱՍԻ «03. ՇԵՆՔԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հ/Հ	Շենքերի տեխնիկական վիճակի հետազննության և անձնագրավորման իրականացման աշխատանքների անվանումները ըստ Երևան քաղաքի և ՀՀ մարզերի	Նպատակը	Պատասխանատու մարմինը	Արդյունքը	Կատարման ժամկետը	ՀՀ պետական բյուջեից 2017 թվականի ֆինանսավորում (հազ. Դրամ)
1	2	3	4	5	6	7
1.	Երևան քաղաքի 4 բազմաբնակարան, 5 կրթական և 2 արողջապահական շենքերի տեխնիկական վիճակի	Երևան քաղաքի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված	ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշին	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն և	2017թ.	3,600.0

	հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	ու արդյունավետ միջոցառումների իրականացում	ության պետական կոմիտե	տեխնիկական անձնագիր		
2.	ՀՀ Արագածոտնի մարզի 1 բազմաբնակարան և 2 կրթական շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	ՀՀ Արագածոտնի մարզի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացում	ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն և տեխնիկական անձնագիր	2017թ.	950,0
3.	ՀՀ Արարատի մարզի 2 բազմաբնակարան, 2 կրթական և 1 այլ նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	ՀՀ Արարատի մարզի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացում	ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն և տեխնիկական անձնագիր	2017թ.	1,500.0
4.	ՀՀ Արմավիրի մարզի 2 բազմաբնակարան, 2 կրթական և 1 այլ նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	ՀՀ Արմավիրի մարզի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացում	ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն և տեխնիկական անձնագիր	2017թ.	1,500.0
5.	ՀՀ Գեղարքունիքի մարզի 2 բազմաբնակարան, 2 կրթական և 1 այլ նշանակության շենքերի տեխնիկական վիճակի	ՀՀ Գեղարքունիքի մարզի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես	ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշին	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն և	2017թ.	1,500.0

	հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացում	ության պետական կոմիտե	տեխնիկական անձնագիր		
6.	ՀՀ Լոռու մարզի 2 բազմաբնակարան, 2 կրթական, 1 մշակույթային, 1 առողջապահական և 1մազական նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	ՀՀ Լոռու մարզի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացում	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն և տեխնիկական անձնագիր	2017թ.	2,200.0
7.	ՀՀ Կոտայքի մարզի 2 բազմաբնակարան և 2 կրթական նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	ՀՀ Կոտայքի մարզի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացում	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն և տեխնիկական անձնագիր	2017թ.	1,300.0
8.	ՀՀ Շիրակի մարզի 3 բազմաբնակարան, 2 կրթական, 1 մշակույթային, 1 առողջապահական և 1 մազական նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	ՀՀ Շիրակի մարզի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացում	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն և տեխնիկական անձնագիր	2017թ.	2,550.0
9.	ՀՀ Սյունիքի մարզի 2 բազմաբնակարան, 2	ՀՀ Սյունիքի մարզի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման,	ՀՀ կառավարու	Շենքի տեխնիկական	2017թ.	1,550.0

	կրթական և 1 մշակույթային նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացում	թյանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	վիճակի վերաբերյալ եզրակացություն և տեխնիկական անձնագիր		
10.	ՀՀ Վայոց Ձորի մարզի 1 բազմաբնակարան, 2 կրթական և 1 այլ նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	ՀՀ Վայոց Ձորի մարզի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացում	ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն և տեխնիկական անձնագիր	2017թ.	1,150.0
11	ՀՀ Տավուշի մարզի 3 բազմաբնակարան, 2 կրթական, 1 մշակույթային և 1 մազական նշանակության շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ և տեխնիկական անձնագրերի կազմում	ՀՀ Տավուշի մարզի շենքերի պահպանման, անվտանգ շահագործման, հուսալիության բարձրացման ու սեյսմիկ ռիսկի նվազեցման ուղղությամբ համակարգված և տեխնիկատնտեսապես հիմնավորված ու արդյունավետ միջոցառումների իրականացում	ՀՀ կառավարության առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե	Շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացություն և տեխնիկական անձնագիր	2017թ.	2,200.0
Ընդամենը						***20,000.0***

Հավելված N 3
ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական
կոմիտեի նախագահի
03 մարտի 2017թ.
N30-Կ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ 04 ԲԱԺՆԻ 08 ԽՄԲԻ 04 ԴԱՍԻ «03. ՇԵՆՔԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՀԵՏԱԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՁՆԱԳՐԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ 2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրային դասիչը		Մատուցվող ծառայության անվանումը Հայաստանի Հանրապետությունում շենքերի տեխնիկական վիճակի հետազննություն և անձնագրավորում	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ			
1001	ԱԾ36	Նկարագրություն Շենքերի տեխնիկական վիճակի հետազննություններ, դրանց վնասվածության առաջացման պատճառների որոշում, տեխնիկական վիճակի գնահատում, շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունների և տեխնիկական անձնագրերի կազմում								
Չափորոշիչներ			I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի	I եռամսյակ	I կիսամյակ	9 ամիս	Տարի
Քանակական		**Շենքերի տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ), այդ թվում՝**		26	48	64	X	X	X	X

	1. Երևան քաղաքի շենքերի (4 բազմաբնակարան, 5 կրթական և 2 արողջապահական) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ)		4	4	11		1,400.00	1,400.00	3,600.0
	2. ՀՀ Արագածոտնի մարզի շենքերի (1 բազմաբնակարան և 2 կրթական) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ)		3	3	3		950	950	950
	3. ՀՀ Արարատի մարզի շենքերի (2 բազմաբնակարան, 2 կրթական և 1այլ) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ)		5	5	5		1,500.00	1,500.00	1,500.00
	4. ՀՀ Արմավիրի մարզի շենքերի (2 բազմաբնակարան, 2 կրթական և 1այլ) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ)		5	5	5		1,500.00	1,500.00	1,500.00
	5. ՀՀ Գեղարքունիքի մարզի շենքերի (2 բազմաբնակարան, 2 կրթական և 1այլ) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ)		5	5	5		1,500.00	1,500.00	1,500.00
	6. ՀՀ Լոռու մարզի շենքերի (2 բազմաբնակարան, 2 կրթական, 1մշակույթային, 1առողջապահական և 1մազական) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ)			7	7			2,200.00	2,200.00
	7. ՀՀ Կոտայքի մարզի շենքերի (2 բազմաբնակարան և 2 կրթական) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ)		4	4	4		1,300.00	1,300.00	1,300.00
	8. ՀՀ Շիրակի մարզի շենքերի (3 բազմաբնակարան, 2 կրթական, 1մշակույթային, 1առողջապահական և 1 մազական) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական			8	8			2,550.00	2,550.00

	անձնագիր (հատ)								
	9. ՀՀ Սյունիքի մարզի շենքերի (2 բազմաբնակարան, 2 կրթական և 1մշակույթային) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ)				5				1,550.00
	10. ՀՀ Վայոց Ձորի մարզի շենքերի (1 բազմաբնակարան, 2 կրթական և 1այլ) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ)				4			0	1,150.00
	11. ՀՀ Տավուշի մարզ շենքերի (3 բազմաբնակարան, 2 կրթական, 1 մշակույթային և 1 մազական) տեխնիկական վիճակի եզրակացություն և տեխնիկական անձնագիր (հատ)			7	7			2,200.00	2,200.00
Որակական	1.-11. Համապատասխանություն տեխնիկական առաջադրանքով սահմանված պահանջներին (տոկոս)				100.0	X	X	X	X
Ժամկետայնության	Մշակված չէ					X	X	X	X
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)		X	X	X	X	0	8,150.0	15,100.0	20,000.0

Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը

Հայաստանի Հանրապետությունում շենքերի տեխնիկական վիճակի հետազոտություններ և անձնագրավորում

Վերջնական արդյունքի նկարագրությունը
Հանրապետությունում բազմաբնակարան և հասարակական շենքերի անվտանգ և հուսալի շահագործում, դրանց սեյսմակայունության բարձրացման ուղղությամբ տեխնիկատնտեսապես հիմնավորված միջոցառումների իրականացում
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը
Պետական գնումների արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը (ները)